

Իսկ Իսկեհան քթով է խօսում, Աբեղեան քաջաշուք է ձգձգում է բառերը, վերջապէս դուրս, տիկին Սիրանուշ, ձեզ պէտք է առանձնապէս նուիրենք մի քանի խօսքեր...

Մենք, թիֆլիսցիքս, ձեզ սաստիկ սիրում ենք տիկին, բայց ի սէր Աստուծու, ի չար մի գործածէք մեր սէրը, մի տանջէք մեզ... Ասեցէք, ինչո՞ւնք, պաշտելի տիկին, այդ ի՞նչ լեզուով էք խօսում հայոց բեմի վրա՝ ֆրանսերէն թէ անգլիերէն լեզուով... Կ. Պոլսի հայոց բարբառը Աղա-մեանի բերանում, Թուրքիայի բերանում, Հրաշխայի բերանում՝ մենք շատ լաւ հասկանում ենք, իսկ ձեզ ամենեւին չենք հասկանում: Որտեղից էք վերցրել այդ տեսակ ղիկցիւն... Կարծես սովորել էք շուտ աւելուկներ ասել:

Գիտե՞ք ինչին նման է ձեր ղիկցիւն, երբ Զորահէքի օրը քահանաները տնից տուն են մանդալիս և շտապում են որքան կարելի շատ տներ մտնել ու դուրս գալ, շտապում են տուն օրհնել, այն ժամանակ նրանք աղօթքները շատ շուտ են ասում: Զիշդ ձեր ղիկցիւն, տիկին, այդ տուն օրհնել շտապող քահանաների ղիկցիւնն է... Քահանան զոնէ իրան արդարեանցիւ մի յարգելի պատճառ ունի՝ ժամանակի սղոթիւնը, իսկ դուք ի՞նչից զրդված այդ նոյն տեսակ ղիկցիւն էք ընդունել: Այո, մենք մեր կեանքում շատ ենք տեսել տուն օրհնող և աղօթքներ առնել շտապող քահանաներ, բայց տիկին Սիրանուշի պէս տուն օրհնող ղերասա-նուհի դեռ ևս չենք տեսել:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱՌՈՒՄԻՑ

Սկսեմք 10-ին

Իմ նախընթաց նամակներից «Մշակ» մէջ յայտնի է, որ արտասահմանեան տախտակի վրա գրված մարտի առեւտրից մինչև առաջիկայ յունվար ամիսը: Այդ յետագայում գլխաւորապէս նրա համար էր, որ ֆինանսների միջնորդը, ի նկատի առնելով գործարանատերերի իրան տուած գեկուցումը, դիտարկութիւն ունէր մօտիկ ծանօթանալու տեղական պայմանների հետ այդ հարցի վերաբերութեամբ: Օգոստոսի վերջին օրերում յատկապէս դրա համար Պետերբուրգից Բաթում եկաւ միջնորդի օգնական Զարուգին: Նրան ներկայացան տեղական գործարանատերերի

ընտրել է իր ասպարէզի համար Ռոստովը, մտածելով որ կարող է այստեղի ժողովրդի միամտութիւնից օգուտ քաղել: Բայց և այս անբաղդները մասամբ կարողացել են այստեղ քաղաւոր դառնալ, կանոնաւորել իրանց կեանքը, աշխատել և հարստութիւն ձեռք բերել: Ահա և այս է պատճառը, որ Ռոստովի հայ գաղթականութիւնը «խաչագող» անունն է կրում:

Այս խառնուրդն աչքի առաջ ունենալով, իւրաքանչիւր կարող է եղբայրացել, որ հայութիւնը գաղթականութեան մէջ շատ թոյլ է. նախ նա չը գիտէ իր մայրենի լեզուն. խօսքս ի հարկէ, դանաղան անհատների մասին չէ, որոնք յաճախած լինելով հայոց զարոյց՝ խօսում են մաքուր գրականական լեզուով: Բացի մայրենի լեզուի բացակայութիւնից, չը կայ և մի իշխող բարբառ. ընթերցողը թող փորձէ Ռոստովի հասարակական այգիում զբոսնելու, անշուշտ նրա ականջին կը հասնէ. «Հաճէ, դուռն աղէկ բան ևս խորել»: «Օվանէս, ջնեպեալական հայրենիք», «ասար նեհեալում մուռն պուտի պտուղի է դեհամը»: և այլն: Տարբեր մարդիկ, տարբեր խելքեր, տարբեր բարբառներ...

Հայ գաղթականութեան կեանքը նոյնպէս հայկական չէ. իր պայքերի ժառանգած բարի յատկութիւնները ոտնակոխ է արած. այդ կեանքն ևս խառնուրդ է. ձևականը և ստորին աւելի իշխող է: Ռոստովի հայր պատրաստ է մի խնձորի համար հաղարներ մտնելու, բայց եթէ ասես թէ տուր մի քանի կօպէկ այս ինչ բարեգործական նպատակով կամ բաժանորդ գրվիր այս ու այն թերթին, նա կամ ատելութեամբ կը լսէ և կը հեռանայ, կամ թէ իր դիմաց կանգնած անձնաւորութիւնից քաջվելով, ամաչելով ակամայ կը կատարէ խնդիրը: Ահա աստի՛ք բերքն մի՛ օրինակ իմ կեանքից:

Կողմից Բոտչիլի, Դոմանանների, Մանթաշեանի և Անդրեյիտի ներկայացուցիչները, որոնց հետ երկար խօսակցութեան և նրանց բացատրութիւնները լսելուց յետոյ պ. Զարուգին եկաւ այն եղբայրացութեան, որ տախտակի համար զրկւած մի նաւթային արդիւնաբերութեան առաջանալուն, և խոստացաւ, որ յունվարից բոլոր տեղաւորութեան գործարանները ազատ կը լինեն մաքս վճարելուց, թէ և այնու ամենայնիւ տախտակի համար զրկւած պուդին 6 կօպէկ մաքս կը մնայ: Գործարանատերերը միմիայն որպէս բացառութիւն մաքս չը պիտի վճարեն, և տախտակը պիտի ստանան մաքսատան հսկողութեան տակ: Այն առարկութեան, որ մաքսատանը այդ դէպքում ևս բաւական դժուարութիւններ կառաջացնէ, և որ մեր երկրից հարկաւորութիւն չունի ուրիշ գործածութեան համար արտասահմանեան տախտակ բերել տալ, միջնորդի պ. օգնականը պատասխանեց, որ մաքս զրկուող յետոյ անկասկած է, որ թէ Ռուսաստանի և թէ Կովկասի տախտակի գները զգալի կերպով կը բարձրանան, և գուցէ այն ժամանակ արտասահմանեան տախտակի ստանալը Բաթումից, որից հսկողութեան չեղած ժամանակ գործարանատերերը որքան էլ ուզեն բերել կարող են տալ, աւելի ձեռնառու և օգտակար կը լինի:

Գործարանատերերը միմիայն օգնականի ուղարկութիւնը դարձրին նաև հետեւալ անյարմարութեան վրա: Տեղական գործարանները Ռիգայից և Պետերբուրգից ստանում են մեծ քանակութեամբ մեխ և մաֆթուլ (проволочка). այդ ապրանքները գալիս են Բաթում և Միջերկրական ծովով, և չը նայելով որ Ռուսաստանի ապրանք է, այնու ամենայնիւ ենթարկվում են մաքսատան ձևականութիւններին: Եւ հէնց այդ հանգամանքի պատճառով, որ գործարանատէրը փոխանակ ուղղակի նաւահանգիստից ստանալու, իր ապրանքը ստիպւած է մաքսատանը ստանալ, ապրանքի վրա բարձրում է մի քանի կօպէկ աւելորդ և անտեղի ծախս, որը տարվալ գլխին ահագին գումար է կազմում:

Հակառակ տեղական մաքսատան կառավարչի դէմ դնելուն, պ. Զարուգին խոստացաւ ըստ կարելիս աշխատելու այդ անյարմարութիւնը ևս հեռացնելու:

Նորերս Սինդակուրի ռուսաց դեսպանը գանգատ էր գրել Բաթում կառավարութեանը, որ Բաթումի Միջերկրական բարձած շահեւորելի մէջ շարունակ պակաս են դուրս գալիս մեծ քանակութեամբ նաւթով լի արկղեր, որոնց համար

Մէկ օր Նոր-Նախիջևանի ռուսամարտններից մէկի մէջ գտնվելով տեսուչը յայտնեց ինձ, որ մի քանի օրից յետոյ պէտք է ռուսամարտնում վիճակաւոր լինի չեղած արակերտների օգուտին, ուստի ինչորեք ինձ հետեւելու իրան դէպի այն սենեակը, ուր գտնվում են հասարակութիւնից ստացած ընծաները: Վերոյիշեալ սենեակը մտնելուն պէս տեսուչը ցոյց տուեց ինձ մի քանի կոտրած, փչացած, անպէտք իրեր, որոնց ուղարկել էր Ռոստովի հարուստ վաճառականներից մէկը: Եւ մնացի կատարեալ ապշած և մի քանի րօպէկից յետոյ հարցրի տեսչին. արդեօք չէր կարելի այդ իրերը յետ ուղարկել. սակայն նա իմ հարցն առանց պատասխանի թողնելով, կանչեց ծառաներին ու բաժանեց նրանց մէջ, ապա դիմեց ինձ. «Վաղն այդ հարուստի անուանակոչութիւնն է, ևս պէտք է ձեզ հետո անպատճառ տանեմ, այնտեղ կը ծանօթանաք մեր ունեւոր հասարակութեան հետ»: Միւս օրը որոշված ժամին հասանք մեր աղայի տունը, որի սենեակները նըմանում էին արքայական տան դահլիճներին, պարկէտ յատակի վրա հաղի կարել էր չըջել, պէս-պէս հագուստներ էին երեւում և ամենայն տեղից լսելի էր «сб поздравлений»...

Ել ինչ տեսակ կերակուրներ ասես, որ չը գտնվէիր սեղանի վրա. չամպայնի, բորձի, կախեթի, սանթարեան, կօնիակի, բոմի, լիքեօրների տեսակ տեսակ շիշերը շրջանում էին մարդու աչքեր: Իշխող լեզուն էր ռուսերէնը, չը նայելով որ մէկ թէ երկու հոգի էին ռուս: Այդ արքայալայել տնից հեռանալուց կրկին նկատեց տեսուչը. «տեսնում էք, սիրելիս, սեղանն արժէր 1000 ռուբլուց աւել և այդ օրն ամեն մարդ կարող է մի քանի տասնեակ ռուբլիներ կուլ տալ, բայց եթէ ուղեւոր մի քանի ռուբլի բարեգործական նպատակով, նա ձեզ կը մերժէ անկաս-

նաւապետները ոչ թէ միայն պակասի վնասը ըստիպված են տալ, այլ և ռուսաց կառավարութեան նշանակած ակցիդը, որպէս արտասահմանի համար ընդունած, բայց արտասահմանի չարտահանած ապրանքին: Գնապանը հրաւիրել էր կառավարութեան ուղարկութիւնը դրա վրա:

Չը նայելով որ ամեն անգամ ապրանք ընդունելիս, բայց գործարանների ծառայողներից, համարում են նաև չոգնաւոր մարդիկ, բայց և այնպէս նաւապետների աչքը այնքան վախեցած է Միջերկրական, որ այդ վերջինի ապրանքները միշտ մի պէսն աւելով են տանում, քան միաներին:

Ահա թէ ինչ հասարակ պատճառներից են առաջանում այդ բոլոր անախորժութիւնները, որոնք առկա են տալիս այդպիսի անվերջ տարածալիւթիւններին:

Պատահել են դէպքեր, որ նաւապետը ցանկանալով հանգամանքից օգուտ քաղել, հաշիւները մէջ մի կամ մի քանի հարիւր արկղ յանկարծ պակասացրել է, նաւահանգիստներից մէկում ծախելու նպատակով: Ինչ անի այդտեղ ապրանք յանձնող գործակալաւորը. նա միշտ չունի չոգնաւոր մէջ եղած բոլոր ապրանքի բանակութիւնը ստուգելու, ոչ ստանալու անգիւղացուն իր ճշմարտութեան մէջ համոզելու և ոչ էլ վնասը իր գրպանից տալու գործարանին, որտեղ իմացածին պէս նրան դուրս կը վռնեն. ուստի նա էլ իր կողմից ամեն միջոց գործ է դնում խաբելու խորամանկ եւրօպացուն. և պէտք է ասած, որ մեր ունեւոր այդ դէպքում փառաւոր կերպով աջողում են: Որքան է լինում խեղճ նաւապետի դարձանքը, երբ տեղ հասնելով, նա ոչ թէ միայն իր 100 արկղը չէ գտնում, այլ և ստիպված է մի քանի հարիւրի փողն էլ իր գրպանից տալու: Երևակայեցէք այժմ թէ նա երկրորդ անգամ ինչ տրամադրութեամբ կը դար Բաթում. նա մտքում դնում է անպատճառ խաբել, բայց մեր մարդիկ էլ ջնած չեն, և այդ լուռ խաբեւորութեան մէջ նրանք, կրկնում են, երբեք չեն յաղթվում:

—Բայց ինչ օգուտ ունիք այդպէս անելուց— նկատեցի ես մի օր գործարանի ծառայողներից մէկին—չէ որ նոյն իսկ Միջերկրական շատ էլ ուրախ չէ այդտեսակ բաների համար, և չէ էլ ցանկանայ, որ այդպիսի խաբեւորութիւններ տեղի ունենան:

—Արդէն մի անգամ սկսել են նաւապետները միջ չը հաւատալ—պատասխանեց նա—հետեւապէս, եթէ մենք ճշգրտեմք հաշիւու էլ լինենք, ու կերպաւորեն, որ նրանք կրկին մի քանի հարիւր չեն ուրանալ, և այդ էլ նրանք կանեն, ոչ թէ խաբելու համար, այլ նրա համար, որ նրանց

կած: Մի այլ անգամ էլ առիթ ունեցայ ուրիշ դէպք տեսնելու, որը նոյնպէս քիչ բնորոշ չէ: Մի օր կանգնած էի «Садовая» փողոցի արտառաւի չ վրա. նայում էի անց ու դարձ անդնդներին, ինձից ոչ շատ հեռու կանգնած էր իր չեղել խառնութի առաջ մի հարուստ հայ վաճառական: Չանցած մի քանի րօպէ, մտեցաւ այդ պարսին մի խեղճ աղքատ խնդրելով նրանից, «աղա-ջան, տուր ինձ մի քանի կօպէկներ, մեղք եմ, խեղճ եմ, Աստուած քո օջախն ամուր պահի»: Եւ ինչ էի կարծում, ևս մտածում էի, ահա նա իր թանկ գաղին մուշտակի փեշերը կը բարձրացնի և մի քանի կօպէկ կը տալ նրան. բայց նա աւելի ամուր փաթեթվեց իր մուշտակի մէջ, բարկացած նայելով աղքատի վրա, բղաւեց. «անպիտան, խաչագող, աս քու հօրանց տուննայ, դա կօնկի վրա աշխատիր, ձիւն է եկել, մարդիկ են հարկաւոր ծածկիս մաքրելու համար»: Եւ կրկին տեսուչը կանգնած եմ, իմ զիտակութեան մէջ դանաղան մտապառկեցներ անց ու դարձ նա անուր. երևակայութիւնը տանում է ինձ այն խեղճ աղքատի հայրենիքը, ևս ընկղմված եմ մտածմունքների մէջ: Այդ զրուիթիւնից զարթեցրեց ինձ մի ուրիշ աղքատ, որը կրկին կանգնած էր նոյն աղայի առջև. «благие, милости просимъ, ради Бога помогите бѣднымъ переселенцамъ» Եւ անդադար սպասում էի, որ այդ խեղճն էլ նոյն բարկութեան կենթարկվի, բայց ոչ, ևս սխալվեցի. աղան երեսը չուռ տալով դէպի խառնութիւնը, «Հաճէ, մի քանի կօպէկ փող տուր, սըրան»:

Այդ հայ գաղթականութեան անդամները շատ քիչ բարոյական կապեր ունեն իրար հետ, սակաւ են իրար յաճախում, իրար հետ յարաբերութիւն անում, միայն նրանք տեսնվում են վաճառականական գործերի համար, այցելելով իրար խա-

որքան էլ հաւատացնենք, չը պիտի հաւատան մեզ. մի անգամ միայն—չարունակեց նա—մի անգլիացի կապիտան կանչեց ինձ իր մօտ և որպէս ազնիւ մարդ խնդրեց, որ չը խաբենք իրան, որովհետեւ նա ինքը ևս մտադիր չէ խաբեւորութիւններ անելու: Այդպէս էլ արինք. նրանից յետոյ այդ չոգնաւոր երբեք արկղ չէ պակասում, մենք փոխադրածապէս հաւատում ենք միմեանց և խաբելու էլ հարկաւորութիւն չունենք:

Աբ. Ապ.

ՆԱՄԱԿ ՎԱՂԱՐՄԱՊԱՏԻՑ

Սկսեմք 15-ին

Երբի յայտնի կը լինի ընթերցողներին, որ ձեռնարանի վարչութիւնը սրանից մի քանի տարի առաջ փակեց ձեռնարանի առաջին և երկրորդ դասարանները:

Այդ կարգադրութիւնը շատ ցաւալի հետեւեց ներ ունեցաւ Մի կողմից ընդհանրապէս աշակերտների թիւը պակասեց, միւս կողմից՝ երկրորդ դասարանի ծխական ուսումնարան չունեցող գիւղերը բոլորովին զրկվեցան ձեռնարան աշակերտ ընդունել տալու հնարաւորութիւնից: Փաստի որ կար առաջին դասարանը, ձեռնարանում դուք կը տեսնէիք աշակերտներ Հայաստանի ամենախաւի անկիւններից և ամենահեռու որ հայ գաղթականութիւններից, իսկ այժմ ձեռնարան ընդունելով մի դարձել, որովհետեւ ձեռնարան մտնելու համար այժմ պէտք է խմանալ առաջին և երկրորդ դասարանի դասընթացը: Շատ հասկանալի է, որ այդպէս պատրաստել իրանց երկխմաններն չեն կարող ոչ Տաճկաստանի, ոչ Կովկասի խուլ անկիւնների բնակիչները, ոչ էլ Հայաստանից հեռու ապրող օտարախօս գաղթականները, այսինքն այն հայերը, որոնց երկխմաններն կը թրթռնէր տալու համար է իսկապէս հիմնված ձեռնարանը: Պարզ է, որ ձեռնարանի առաջին և երկրորդ դասարանների փակելու նախաձեռնողները և նրանց հետեւողները ամեն բան աչքի առաջ են ունեցել, բայց ձեռնարանի նպատակը:

Եւ իրաւ, այդպիսի կարգադրութեան հետեւեց ներն եղել են աշակերտների թիւ պակասելը և այն, որ այժմ ձեռնարանի աշակերտները 1/3 մասը ալեքսանդրապոլցիք են:

Ի դէպ, հիւանդանոցի մասին Յայտնի է, թէ որքան մեծ նշանակութիւն ունի հիւանդի համար գիւղերը: Բայց, ինչպէս փաստեցրեց ցոյց տալիս, դիւր է տաւած բանը ձեռնարանում նախկին վարչութեան ժամանակ ամենեւին չէ եղել:

Նուրիները: Գաղթականութեան պակասում են թարմ երիտասարդական ոյժեր՝ կառավարողներ: Նրանք չունեն մի ժողովրդային, ուր կարողանային միասին հաւաքվել չիֆիկ, միասնել գաղթականութիւն աւելի ամուր կապերի ենթարկել: Նրանք չունեն մի հասարակ փայտաշէն եկեղեցի անգամ, ու այդ հարկերաւոր ընտանիքներն իրանց Աստուծոն փառաբանել կարողանային: Գուցէ շատե՞ր միթէ Նոր-Նախիջևանը իր 5 եկեղեցիներով Ռոստովից շատ հեռու է, միթէ ձիաբաշ կրկնվում լին միայն 20 կօպէկ չարժէ և այդ 20 կօպէկին մեծ փող է: Սակայն այդպէս ասողը չէ, դուք մտածել թէ ինչպէս անէ մի չբաւար խեղճ մարդ, որի ընտանիքի անդամների թիւ 5-ից ոչ պակաս է: Միթէ այդ խեղճ անհաղ մի բուրբի պէտք է միսն եկեղեցի գնալու համար կամ թէ որքան փող պէտք է նստէ ձիաբաշ կրկնվում մի այդպիսի ընտանիքի վրա: Բայց եկեղեցին կայ մի ուրիշ հիմնարկութիւն, որ կարելի է իւրաքանչիւր ժողովրդի համար, եթէ նա ուղում է իր սիրուն աղւաւցները, աղին զգացում ների տեղ դառնալ, հոգեպէս կրթվել, դա է զԵՄ րոցը: Այդ վերջինի նշանակութեան մասին կարելի չունենք խօսելու, ըստ որում ոչ ոք չէ կարող զարթոյն կրթական ոյժն ուրանալ: Մտաքանք նոյնպէս ուղարկութիւն դարձնել մի բարեգործական ընկերութեան վրա, այդ վերջինը գաղթականութեան անհրաժեշտ է. Բոստով են լցվում հարկերաւոր հայ մարդիկ, որոնք վերջը չեն ունենում մի քանի կօպէկ անգամ իրանց, քաղցը յաջեցնելու համար և մանր նրանց ապաստում է տանջանքներից:

(Կը շարունակվի)

հրամանները կերել են այն, ինչ որ կերել են ասորացիները, պատ պահելը հրամանների համար էլ հրամանները պարտադիր է համարվել, որքան ասորացիների համար: Եւ շատ լաւ յիշում եմ, որ Ալվա-դովիկի, Անդրէաս և Ալգաիլիւնեան եպիսկոպոսնե-րի տեսչութեան օրով հրամաններին տալիս էին իրենց կերակուրները, որոնց նշանակում էր բժշկել-ընկալել և եղև նոյն իսկ Նահապետեանի տես-չութեան առաջին տարիները: Հետաքրքիր է, թէ ինչպէս կը վերաբերվի այդ հարցին ճեմարանի նոր վարչութիւնը:

Տ. Յ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳԻՐՆ

Մեղրի, 7 սեպտեմբերի
Ճանապարհորդելով Զանգեզուրի և Նախիջևանի գաւառների մի քանի կողմերում, ես ականա-տես եղայ մի տիւրու երևոյթի, որը կազմում է պատկերի գիւղացական ժողովրդի օրվայ ցաւը և որի վրա հարկ եմ համարում դարձնել լրա-դրութեան ուշադրութիւնը:

Դա՛ ց ու բ ն ե ռ ար հ ն ս տ ա կ ա ն կ ե ռ պ ո ղ թ ա ն գ ա ց ն է ի ն է:

Այս կողմերում այս տարի ցորենի բերքը լաւ է, իսկ մի քանի տեղերում շատ լաւ. բերքին նայելով պէտք է ցորենը վաճառելը պուրը 50—60 կոպէկով, շատ շատ 70 կոպէկով: Սակայն հէնց այս րօպէիս, երբ այս տողերը գրում եմ ցորենը ծախվում է պուրը 1 րուբլի, մինչև իսկ 1 րուբլի 10 կոպէկ, և եթէ սրա առաջը չառնվի, մի ամսից յետոյ ցորենի գինը կարող է դառնալ 1 ր. 50 կոպէկ կամ 2 րուբլի... Աւելին չեմ ուզում ասել, որովհետեւ տեսնելով մեր գիւղացի-ների տնտեսական ողորմելի վիճակը, սարսա-փում եմ աւելի բարձր գնի անունն իսկ տալ...

Դա մի անքնական երևոյթ է, որի առաջը պէտք է առնել: Ասում եմ անքնական երևոյթ, որովհետեւ, որքան ես նկատեցի, ցորենի գինը արհեստական կերպով են բարձրացնում:

Ցորենի գնի արհեստական կերպով բարձրաց-նողները նախ՝ զանազան վաճառու-ցորենա-վաճառներն են, և երկրորդ՝ այն սխալ լուրերը, որոնք տարածվում են ժողովրդի մէջ՝ Ռուսա-տանի մի քանի նահանգներում այս տարի երեւ-ցած սովի պատճառով:

Այնպիսի տարի այս կողմերում երեւցած մո-րին առիթ տուցե վաճառու ցորենավաճառ-ներին կարելու, թէ այս տարի ցորեն չի լինի: Նրանք շտապեցին ցորեն գնել, որ այս տարի թանգ գնով վաճառեն: Մորեւը ցանքերին վնաս չը տուցե, բայց այն մարդիկ, որոնք ցորեն են ամբարել, աշխատում են համոզել թէ ցորենը շատ և շատ քիչ է այս տարի, և մասամբ արդէն հասնում են իրանց նպատակին, ցորենի գինը 1 րուբլուց բարձրանալով:

Իսկ Ռուսաստանի մի քանի նահանգներում նկատվող ցորենի պակասութիւնն առիթ է դա-րձել՝ աւելի սաստկացնելու ժողովրդի մէջ տա-րածված կասկածելի լուրերը:

Չէր կարող երևակայել, թէ ինչ կ ու ռ ե ր օ զ ն ե ռ են պատահում: Տեսնում էք, որ ահա մէկ կամ միւս գիւղացին սրա նրա ականջին փափալով, վաղում է վաճառուի մօտ, 20—30 տոկոսով փոք վերցնում, որ գնայ իր տարեկան ցորենն անելի:

Գիտե՛ք թէ ինչ է փափալում նա իր հարեանե-րի ականջին. չաղէս գրեւ Քաղուից, թէ, հայր, ցորեն առ, մէկ մանէթ, մէկ ու կէս մանէթ էլ լինի առ, որովհետեւ ցորենը շատ թանգանալու ա: Բազու ցորեն չը կայ: Գաղէթներն էլ գրում են թէ Ռուսաստան սով ա ընկել:

Մէկի օրդին է այդպէս գրում, միւսի կըբայրը, երրորդի աղգականը,— և ահա տեսնում էք, որ գիւղացիների մէջ իրարանցում է ընկել և ամեն-քն էլ թանգ գնով ցորեն են առնում, այն էլ 20—30 տոկոսով վերցրած փողով...

Ի հարկէ, շատ լաւ կը լինէր, որ գիւղացիներ-ը չը հաւատային իրանց ստացած նամակներին, որովհետեւ Բազուից, Թիֆլիսից, Բաթումից նա-մակ դրող դարձեալ անհայտ է իրանք անգրա-գէտ մարդիկ են, մէկը դուքնի աշակերտ է, երկ-րորդը գործարարում ծառայող մշակ, երրորդն ուղ գիտէ ինչ, որոնք իսկի լրագրի երեսն էլ չեն տե-սել, թէ և լրագրից են լսաբար տալիս: Բայց ցաւն էլ նրանումն է, որ գիւղացին աւելի տքնէ և կայր է քան օտարութիւն գնացած իր օրդին և եղբայ-րը, և վերջինները նրա համար հեղինակաւոր են և ամենապէս...

Ջարմանալի չէ, որ երբ Բազուից կամ Բաթու-մից մի դուքնի աշակերտ գրում է թէ՛ «հայր, էս տարի սով է լինելու, գաղէթներումն էլ գրած ա, ցորեն առ», հայրը գլուխը կորցրած, վաղում է ցորեն առնելու, ինչ գնով էլ լինի:

Շուկաներումն էլ եղած հացը բոլորն առել են և այդ պատճառով ցորենի գինը օրերով է թանգա-նում...

Այդ ցաւալի երևոյթի առաջն առնելու համար լրագրութիւնը պարտական է հոգալ, որովհետեւ որ կողմ դառնում եմ, ամեն տեղ էլ ասում են թէ չգաղէթներումն է գրած, որ Ռուսաստանում սով ա, և մեզ համար էլ սով պիտի լինի: Գա-ղէթներում գրածն էլ, ինչպէս անկասկած արդէն հասկանում էք, Ռուսաստանից եկող հեռագրի-ներ և լուրերն են՝ որոնք սպառնում են լրա-դիրներում:

Եւ ահա այս խուլ անկանխելի տեղեկացնելով ձեզ այս ողբալի վիճակի մասին, խնդրում եմ, որ նոյն լրագրութեան միջոցով, որից ի բ ո ռ է դ ու ռ ս են կ ե ղ ի այդ լուրերը, պարզէք, որ մեզ մօտ ոչինչ սովի նշաններ չը կան, որ ցորենի թանգացնելն էլ մի արհեստական բան է և որ վերջապէս Ռու-սաստանի մի երկու նահանգների բերքի պակա-սութիւնը ոչինչ առնչութիւն չունի մեր կողմերի հետ:

Այդ հարցերը պարզելով Թիֆլիսի թէ հայ և թէ ռուսաց լրագրութիւնը մի լաւ ծառայութիւն արած կը լինի մեր ժողովրդին, որովհետեւ թ ա ն գ հ ա ց ու տ ե ռ ՝ տ ն տ ե ս ա կ ա ն մ ա հ է ժողովրդի համար:

Խ. Մալումեան.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կիրակի, սեպտեմբերի 22-ին, բաժանորդագրու-թիւնից դուրս, Ազնուականների բանկի թատրո-նում (նախկին Արծրունու) Հայոց դրամատիական խումբը կը ներկայացնէ 1) Դոն-Գրիգորի, կօ-մէդիա 3 արարածով, թարգ. Թուրքանցի, իտա-լերէնից. 2) Չաւէշա. տիկ. Սերանյալը կը երգէ, պ. Պետրոսեանց կը կարդայ: 3) Օսկան Պետրո-վիչը դժոխքում, Փարս-Կոմէդիա 3 արարածով, հեղ. Գ. Սունդուկեանի. կը մասնակցեն տ.տ. Սի-րանյալ, Մէլքեան, Փառնաձեմ, Վարդուհի. պ.պ. Թուրքան, Տէր-Գալեան, Աղայեան, Վրոյր, Պարոն-Սարգսեան, Աբրահամեան, Յարութիւնեան և Մամիկոնեան: Սկիզբն է ճիշտ 8 ժամին երե-կոցեան:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ
մեզ գրում են. «Տեղիս Գայիանեան օրերորոշ գարուցի համար եկած են արդէն Թիֆ-լիսից Օհանեան ընդերը. դրանցից մինը առա-ջուսուցչուհի է»:

Երևանից մեզ գրում են, որ քաղաքային վար-չութիւնից պահանջվել է քաղաքի միակ հրապա-րակը, որը գտնվում է Անգլիական և Կոլոմբիա-կինսկի պղնձիների մէջ տեղ, դիջանել կառավա-րութեանը, որպէս զի այդ հրապարակի վրա կա-ռուցվի ռուսապաշտան եկեղեցի:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Բելգրադից հեռագրում են, որ Բալկանեան պետութիւնների դաշնակցութեան ձգտող մաս-նաժողովները հրաւիրված են ընդհանուր ժողովի:

—Վիեննայում Չինաստանից ստացված տեղե-կութիւններից երևում է, որ չինական կառավա-րութիւնը անկախ է ճնշել յեղափոխական շար-ժումը: Ի նկատի առնելով այդ, եւրոպական պե-տութիւնների դեպպանները խորհրդակցում են որ և է միջոցով ճնշել այդ շարժումը:

—Կ. Պոլսից հեռագրում են, որ Նիմուս գոր-ծերի դրութիւնը գնալով ծանրանում է, ապա-տամները ամեն կէտերում յաղթում են թիւր-քաց զօրքերին: Թիւրքաց բերդապահ զօրքերը դուրս են մղված Նիմուս արևելեան մասից: Ապ-ստամները ժամանակաւոր կառավարութիւն են հաստատել:

—Թիւրքիայից լրագիրներին հեռագրում են, որ մեծ վիղրը Զէվար-Ֆաշան այժմ դբաղված է Կրեան կղզում. մայրվելի վերանորոգութիւնների նախագիծը մշակելով:

—«Ind. Belge.» լրագրին Կ. Պոլսից հեռա-գրում են, թէ լրագիրների տարածած լուրը իբր-

թէ Ռուսաստանը հրաժարվել է ընդունել Թիւր-քիայից իրան հասանելի պատերազմական վա-ճառութիւնը,—սխալ է: Ռուսական դեսպան պ. Նելիզով շարունակում է պահանջել Թիւրքիայից, որ այդ վերջինը, դաշնագրի համաձայն, չուշացնի իր պարտքի վճարելը: Նրա վերջին պահանջը ներկայացված էր Բ. Գրան երկու շաբաթ առաջ:

—Սերբիական քաղաքական գործիչներից մէկին ուղարկած նամակում Ուլիամ Գլադստօն հետեւալ խօսքերովն է իր կարծիքը յայտնում բալկանեան հարցի առիթով. «Ես երբեք անպայման չէի նպատատում մարկիզ Սուլթրիի նոր քաղաքականու-թեանը: Եթէ այժմեան առաջին միջնադարը Լօն-դօնի քաղաքային տան մէջ իր արտասանած ճա-ռով կամենում էր ասել, որ ցանկանում է բոլ-գարներին գերակշռող ազդ տեսնել Բալկանեան թերակղզու վրա, կամ որ և է այլ գերակշռու-թիւն հաստատել, այն ժամանակ ես պէտք է հրա-ժարվիմ նրա հետ որ և է համերաշխութիւն ունե-նալուց: Ես անկեղծ կերպով համակրում եմ հա-րաւարեկեան բոլոր եւրոպական ազգերին, բայց ոչ մէկ զանազանութիւն չեմ դնում նրանց մէջ, և անհրաժեշտ եմ համարում անկեղծութեամբ վերաբերվել դէպի նրանց»:

—Թիւրքաց կառավարութիւնը մտադրութիւն ունի ամենաեւանդոտ կերպով ճնշել Նիմուս պա-տամութիւնը: Սուլթանը յոյս ունի, որ օգնական զօրքերը կը հասնեն Նիմուս սեպտեմբերի 16-ին (28-ին) և որ դրանից յետոյ ապստամբութիւնը ճնշված կը լինի: Մտադրութիւն կայ խստապէս պատժել ապստամբութեան առաջնորդներին, որ-պէս զի ոչ ոք այլ ևս չը համարձակվի ապա-տամվել փաղիշահի դէմ: Վերջապէս իդի-դ-Բեռ-կում վճռել են խստապէս պահանջել անգլիա-կան զօրքերի հեռանալը Եգիպտոսից: Սուլթանի հաստատակամութիւնն արդէն բերում է իր պտուղները: Եգիպտացիները սկսում են մի փոքր ինքնուրոյնութիւն ցոյց տալ և այնպէս հլու հա-ղանութիւն չեն ցոյց տալիս Անգլիային: Սուլ-թանի ներկայացուցիչն Եգիպտոսում, Ալամդ-Մուխտար-փաշա աւելի խիստ լեզու է գործա-ծում և դիմում է ինքզինին սպառնալի առաջա-դրութիւններով: Մի խօսքով սուլթանը վճռել է իր տան իսկական տէրը լինել:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Յայտնի գնեւորը Բ. Ֆաղէեկի հօր յիշողու-թիւնները այժմ տպվում են «Русский Архив» ամսագրում: Բերում ենք մեզ համար մի հետաքր-քելու կտոր այդ յիշողութիւններից: «Հայոց կաթողի-կոսական թանգարանի մէջ էջմիածնում, 30-ական թիւականներին կար եպիսկոպոսական մի թանգարան թագ, որը պարզարկած էր շատ մեծ և թանգա-գին զմուրսով: Այդ թագի հետ, որը էջմիածնի պարծանքն էր կազմում, հետեւալ անցը պատա-հնց: Բարձր դիրք ունեցող մի տիկին, յափշտակ-վելով այդ թագից, դիմեց էջմիածնի վարչութեա-նը, ինչպէս ի կարճ ժամանակով տալ իրան այդ թագը նրա նկարը հանելու համար: Վարդապետ-ներին շատ հաճելի չը թվաց այդ առաջարկու-թիւնը, բայց չը համարձակվելով մերժել բարձ-րաստիճան տիկնոջ խնդրքը, նրանք մի պատգա-մաւորութեան ձեռքով ուղարկեցին Թիֆլիսի վե-րոյին: Եւ թագը կերպարարվեց էջմիածնի. բայց փոխանակ թանգարանի զմուրսով թագը զարդարված տեսան ամենահասարակ և էժանա-գին կանաչ ապակիով: Վարդապետները սկսեցին վաչ տալ իրանց դուրսը և մինչև այժմս էլ այն ու վախ են անում, պատմելով թագին պա-տահած այդ կերպարանափոխութիւնը, որի հետ մինչև հիմա էլ չեն հաշտվել: Պարսից բռնի տի-րապետութեան ժամանակ Ուրանի սարդարները, որոնք չը գիտէին զանազանութիւն գնել ուրիշի և իրանց սեփականութեան մէջ, չը յանդգնեցին իրացնել վանքի սեփականութիւնը, իսկ ռուս տիկնոջը նրա եւրոպական կրթութիւնը և հասա-րակական բարձր դիրքը շարժեցնեցին ազանու-թեան մէջ գերադասելի պարսից սարդարներին: Այդ հետաքրքիր պատմութիւնը իր ժամանակ մեծ աղմուկ հանեց և խօսակցութեան առարկայ դարձաւ: Խօսեցին, խօսեցին և դրանով էլ վեր-ջացաւ, սակայն էջմիածնում մինչև այժմս էլ այն ու վախ են ընշում»:

Մարդկային կենքի միջին տեղութիւնը 33 տարի է, բայց երկրաշնորհ ազգաբնակչութեան չորրորդ մասը մեռնում է 15 տարեկան հասնե-լուց վաղ: 1000-ից մէկը հասնում է հարեւա-մեայ հասակին, իսկ 1000-ից 60 հասնում են 65 տարեկան հասակին: Իւրաքանչիւր տարի մեռ-նում են 33,033,033 հոգի. մի րօպէում 60 և մէկը մի վայրեկեանում: Իսկ 100 միւսնողների վրա դա-րիս են 116 ծնունդներ:

Պարկից հարողում են, որ նորիս վախճան-

ված Գրեկի աղջիկը, տիկին Վիլյուն բաժանվում է իր մարդուց: Նա վաղուց արդէն դիտաւորու-թիւն ունէր բաժանվել, բայց այդ բայը չէր ա-նում իր ծերունի հօր պատճառով:

ՄՇԱԿԻ ՀՆՈԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆՑ

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 18 սեպտեմբերի: Երէկ, երկու-յեան 9 ժամին, Մեծ Իշխանուհի Ալեքսանդրա Գէորգիեւնայի դադաղի մօտ, որի վրա բաղմա-թիւ պսակներ են դրված, հոգեհանգիստ կատար-վեց Թագաւոր Կայսրի, Թագուհի Կայսրուհու և Օգոստափառ Ընտանիքի անդամների ներկայու-թեամբ: Այսօր, ցերեմօնալի համաձայն, կատար-վեց թաղումը: Դադաղը գերեզման իջեցնելու ժամանակ, կատարվեց սահմանված թղթանօթա-ձրութիւնը:

ՉԻՍՏՈՊՈԼ, 18 սեպտեմբերի: Այստեղից հացա-հատիկների և կարտօֆէլի արտահանութիւնը կա-դանեան սահմաններից դուրս արգելված է: Գնե-րը պակասում են:

ԲԻՒՍՍԵԼ, 18 սեպտեմբերի: Այսօր առաւօ-տեան գնեւորալ Բուլանտէ անձնապաշտութիւնը գործեց տիկին Բոնէմէնի գերեզմանի վրա՝ բեւօլի-րի հարուածը ուղղելով դէպի ականջը:

ՊԱՐԻՋ, 18 սեպտեմբերի: Գնեւորալ Բուլանտէի անձնապաշտութեան լուրը հաստատվում է, մա-հը յանկարծակի էր:

ԼՈՆԴՈՆ, 18 սեպտեմբերի: Գլատեմալայում ապստամբութիւն սկսվեց:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 19 սեպտեմբերի: Այսօր կա-տարվեց Խ. Ա. Գոնչարովի թաղումը: Բաղմաթիւ պսակներով զարդարված կաղնու հասարակ դագա-ղի ետեղի դնում էր հաղաբարձ ամբողջը. ներ-կայ էին մամուլի ներկայացուցիչները, ուսանող երիտասարդութիւնը, եկեղեցուհի էին՝ Մեծ Իշ-խան Կոնստանտին Կոնստանտինովիչ, գիտու-թիւնների ակադէմիայի պատգամաւորութիւնը և վարչութեան ներկայացուցիչները: Գերեզմանի վրա ոտանաւոր կարդաց Կոլոմիսկի—Այսօր գի-տութիւնների ակադէմիան միտքագլուխ Մակարի պրեմիան որոյնց տալ. 1500 ր. գնեւորալ-մա-յօր Մասլովսկուն «Ռուսաց զօրքը եօթնամայ պատերազմում» վերնագրով հեղինակութեան հա-մար. 1,500 ր. պրօֆէսոր Տալիլաբովին «Գիւ-ղատնտեսական արդիւնքների քիմիական տեսի-ւօրդի» վերնագրով գրածից համար. 1,000 ր. սենատոր Սեմենովին «Գիւղացիների աղատու-թիւնը» վերնագրով գրածից համար. 1000-ական րուբլի Դիւլէրսաու պրօֆէսորին բուլաբական լե-զուի բառարանի համար և պրօֆէսոր Լիւբովի-չին «Կաթիլական բէակցիայի սկիզբը» վերնա-գիրը կրող հեղինակութեան համար:

ԿԻԵՎ, 19 սեպտեմբերի: Այսօր «Ասիոլոգիա Մօզիլա» տեղում կատարվեց ուղղափառութեան և ռուս ազգութեան պաշտպանի Գալիցիայում, աւագ-քահանայ Թովսան Նաւոմովիչի թաղումը:

ԲԻՒՍՍԵԼ, 19 սեպտեմբերի: Բուլանտէի անձ-նապաշտութեան մասին հետեւալ մանրամասնու-թիւններն են հարողում. գերեզմանոցում աշխա-տող չորս բանուորներ 11 1/2 ժամին նկատեցին դէպի տիկին Բոնէմէնի գերեզմանը գնացող Բու-լանտէին, իսկ 12 1/4 ժամին նոյն բանուորները լսեցին բեւօլիքի արձակման ձայնը: Մօտ վաղելով գերեզմանին, նրանք համոզվեցին, որ Բուլանտէի տարձանակահար է եղել և որ գնալով, ջուրքին դիպելով, ծակել էր գանգը: Գերեզմանոցի կա-ռավարիչը, որին անպապող տեղեկացրին պատա-հածի մասին, հանեց բեւօլիքը Բուլանտէի սեղմ-ված ձեռքից և հրամայեց մարմինը տեղափոխել գերեզմանոցային դաժարանը, որտեղից նա կը տարվի Մոնտրէլ փողոցի վրա գտնվող ընակա-րանը: Բուլանտէ պառկեցրած է անկողնու վրա-բռնքի վէրքը ծածկված է սպիտակ շորով: Դէմքի գծագրութիւնը չէ փոխված: Ժողովրդի ահագին ամբոխ կանգնած է ընակարանի առջև և տաք խօսակցութիւն ունի այդ անցքի մասին: Մի քա-նի ժամանակից արդէն, ըստ երևոյթին, Բուլանտէ մտածում էր անձնապաշտութեան մասին. այդ ենթադրութիւնը մասաւանջ երևում է այն փա-տից, որ նա տիկին Բոնէմէնի գերեզմանի վրա պսակ դրեց—«Մինչև շուտով տեսնութիւն, Մար-գարիտա» գրութեամբ:

ԼՈՆԴՈՆ, 19 սեպտեմբերի: Պարլամենտի ան-դամ Զէմս Ուլիամ Լօրօքը արտաքին գործերի միջնադրի օգնական է նշանակված Զէմս Ֆերդի-սոնի տեղ:

ՎԻԵՆՆԱ, 19 սեպտեմբերի: Բելիսներգից, Զելիսներգի, հեռագրում են, որ կէս դիւերին Բելիսներգի երկաթուղային կամուրջը, որի վրայով պէտք է անցնէր աւստրիական կայսերական գնացքը, դիւարակալով օդը թռցնելու փորձ էին արել: Կամուրջը և բէլային ճանապարհի մի մասը մասամբ փլուզւած են. դժբաղդ դէպքեր չեղան: Կայսերական գնացքը կարողացաւ աջողովեալով անցնել ճայլիւնից փլուզւած տեղը: Փորձն արել են, երեւի, անարխիստները:

ՎԻԵՆՆԱ, 20 սեպտեմբերի: Այս գիշեր Բելիսներգի մօտ փորձ փորձվեց դիւարակալին ուռնակներով ճայլեցնել երկաթուղային գիծը, որով պէտք է անցնէր գնացքը Ֆրանց-Յոսէփ կայսրով, Բելիսներգի Բողնետալ առուարձանը գնալու համար, ուր գտնուում է երկաթուղային կայարանը: Կայարանի զլաւորը գիշերը լսեց երկու դօրեղ ճայլիւն. իսկոյն գնացին քննելու երկաթուղային հողաբլուրը, որը մասամբ փլուզւած գտնւում: Մտակայ կամարի մօտ տեսան, որ

կամարի շինուածքից հանկած են մի քանի քարեր. այնտեղ և եթ ընկած էին մի քանի ուռնակներ կտորներ: Գրանից երկու ժամ առաջ, կամարը տեսել են երկաթուղային ծառայողները, այն ժամանակ կասկածելի ոչինչ չը նկատեցին. այդ պատճառով կարծում են, որ չարադրածները դրել են այնտեղ դիւարակալին երկու փոքրիկ ուռնակներ վառվող պատրոզներով և որ այդ ուռնակները ճայլվեցան մէկը միւսից յետոյ: Ճայլիւնից պատճառած անհաւան փնտրել իսկոյն և եթ ուղղեցին: Պաշտօնական քննութիւնից երեսց, որ դա ոչ թէ նախամտածված մի փորձ էր, այլ մի յիմար վարձուք, այն հանդիսաւոր ընդունելութիւնը խախտելու, որ պատրաստուում էին անել կայսրին Բելիսներգում: Բելիսներգ հասնելուց յետոյ, իսկոյն և եթ գնկուցում արին պատահածի մասին:

Խմբագիր-հրատարակող՝ Գ.Գ.Գ.ՈՒՍՏՈՒՆ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Պատիւ ունեն յայտնել ի դիտութիւն հասարակութեան և այն անձանց, որոնք յանձն են առնել բաժանորդ հաւաքել իմ հեղափոխական ալբոմին—հայ գործիչներին, թէ ի նկատի ունենալով, որ շուտով լոյս է տեսնելու այբուբեն, ևս անհրաժեշտ համարեցի ստորագրութիւններ ժողովել մի տեղ կենտրոնացնել, այն է Թիֆլիս, Կենտրոնական գրադատական օրգանի մօտ: Այս պատճառով խոնարհաբար խնդրում եմ բաժանորդագրութեան տարածման գործակիցներին, որ բարեհաճեն ստորագրութեան ցուցակը և ժողոված դրամը հասցնել Կենտրոնական գրադատական օրգանի մօտ: Ստացելով լուր 1-ը: Այնտեղ թող դիմեն և նրանք, որոնք ցանկանում են ստորագրել ալբոմին, նրանք, որոնք մինչև որոշեալ ժամանակը ժողոված դրամը չեն հասցնել, կը զրկեն բաժանորդներին ալբոմը բաժանորդագրութեան 3 րուրի վճարով ստանալու իրաւունքից: Ալբոմը լոյս տեսնելուց յետոյ կը ծախվի 5 րուրով:

1—3

ՊՐԱՅՄ ՏԵՐԱՍՏՈՒԹՅԱՆՈՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ յայտնում է ի դիտութիւն ընդհանուր, որ նա ներկայ սեպտեմբերի 29-ին, կէսօրվայ 12 ժամին, կը կայացնէ աճուրդ նախկին կապալով տալու համար Աշխատայա փողոցի վրա, երկաթուղու գծի ետևում, փոքրիկ անալիսի (խուտորների) շարքում գտնվող 7 կտոր քաղաքային գետին, ամեն մէկը 134-ից մինչև 182 քառակուսի սաժեն մեծութիւնով, երկրորդ վաճառելու համար նոյն տեղում գտնվող 3 կտոր քաղաքային գետին, մէկը 202, միւսը 171, և երրորդը 189, քառակուսի սաժեն մեծութեամբ:

Աճուրդը տեղի կունենայ տեղում: Մասնակցողները պէտք է ներկայանան իրանց առաջարկած գնի կամ կապալավարձի 10% աճուրդի ժամանակ, իսկ առաջարկված գնի կամ կապալավարձի մնացեալը առաջին կիսամեակի (կէս տարվայ) համար պէտք է վճարեն մի ամսվայ ընթացքում, սկսած այն օրից, երբ գնորդները կամ կապալաւորները կը յայտնեն քաղաքային Դուռայի կողմից իրանց վրա աճուրդը հաստատվելու մասին:

2—3

ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱԳԱՋԻՆ Բ ԿԵՕԼԵՐԻ ԵՒ ԸՆԿ.

ՄՍՍԿՎԱՅԻՆ, Նիկոլայայ փողոցում:

- Սեփական քիմիական գործարան.
 - Սեփական տեղատուն.
 - Սեճ քանակութեամբ և հատով վաճառուուն.
 - Ապրանքների յայտնի լաւ արժանատւութիւն և թարմութիւն.
 - Գների յայտնի չափաւորութիւն և պատուէրների կատարման ձգողութիւն.
 - Հաշուող անձանց համար, որոնք սիրում են կոնֆօրտ և կարգ, իրանց բովանդակութեամբ հետաքրքիր պրէյս-կուրսանները ուղարկում են ձրիապէս.
 - Օգտակաւ և ընդհանրապէս գործածվող մասնաւոր բաղմամբիւ առարկաներ
- ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ
- Ապրանքների ուղարկելը գաւառականների պահանջմամբ կատարվում է պատկերողների ցանկութեամբ վրադիր վճարով:

2—5 (№ 2)

ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ վաճառականական զասակարգին պատկանող իւրաքանչիւր անձի համար ու ՄԱՏՁԵԼԻ ՁԵՆՆԱԿԱՆ առևտրական հաշարարութիւնը առանց ուսուցչի օգնութեանը ուսումնասիրելու համար:

Ս. ՄԱՆՈՒԵԼԵԱՆԻ

ՁԵՆՆԱԿԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՇԻԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Տօկոսների լիակատար աղիւսակներով, 1-ից մինչև 10.000 րուր. համար. 10%-ից մինչև 12%՝ վաճառվում է եղբայր Մովսիսյանների բանկային գրասենեակում և հեղինակի մօտ. Թիֆլիս, Ուրուսալի, № 9. Օտարաբաղադրացիք դիմում են վերջին հասցեով՝ Ս. Մ. ՄԱՆՈՒԵԼԵԱՆՍԻ. Գինն է 1 րուրի: Փօստի ծախս 21 կ. Գրավաճառներին դիմում կը լինի:

13—150

Ստացվել է և վաճառվում է՝ „ԼՈՒՍՍԱԳԻՄԻՆ“ գինը 1 րուրի, ճանապարհ-հաճախով 1 րուրի 20 կ.:

Այս Մարուն 3 կօպ.
Փոքրիկ լրտես 2 "
Գարիբալդի 10 "
Հայերեն-ռուսերէն բառարան, ճանապարհահաճախով 2 րուրի:
Պահեստը պ. Տէր-Սարգսեանցի խանութում է, Կօրցոյցայա փողոցի վրա: Թիֆլիսի գրավաճառները և գումարով աւանդները ունենում են 15%՝ զինում: Օտարաբաղադրացիք—20%: ճանապարհահաճախը գումարով գնորդների վրա է:

2—5

ՊԱՆՏԻՈՆ ՏԵՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆԻ

ԳԻՄՆԱԶՆԱԿԱՆ ՀԻՆԳ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՎ

Նորին գերազանցութեան կովկասեան ուսումնարանական շրջանի պ. Հոգաբարձուի կարգադրութեամբ յուլիս ամսի վեցից վերափոխվում է հին դպաստական և ուսումնարանի պետական գիմնազիայի և բէալական ուսումնարանի ծրագրով:

Պանտիոնում կաւանդվեն՝ կրօն, հայոց եկեղեցական պատմութիւն, մեկնութիւն պատարագի հայոց, հայոց լեզու (հայերի համար), ռուսերէն, ֆրանսերէն, գերմաներէն, լատիներէն, յունարէն, վրացերէն, թուրքերէն լեզուներ, թուրքաբանութիւն, ալգեբրա, երկրաչափութիւն, ընդհանուր պատմութիւն, առասաց պատմութիւն, ընդհանուր աշխարհագրութիւն, Ռուսաստանի աշխարհագրութիւն, բնական պատմութիւն, նկարչութիւն, գրութիւն, խմբական երգեցողութիւն, երաժշտութիւն, պար, մարմնամարզութիւն:

Պանտիոնում պատրաստվողները կարող են մանկ գիմնազիայի, ռէալական ուսումնարանի, Լազարեան ճեմարանի մինչև հինգերորդ դասարան, նոյնպէս զէմլէնին, տեխնիկական և այլ միջնակարգ ուսումնարաններում:

Աշակերտներ ընդունվում են թօշակաւորներ, կիսաթօշակաւորներ և երթեկներ: Ընդունելութիւնը կը սկսվի օգոստոսի 20-ից: Հասցէն. Թիֆլիս, Сололаки, Вельяминовская улица, домъ № 11.

10—10 (Г)

ՆՈՐ ՀԻՒՐԱՆՈՑ НОВЫЕ НОМЕРА

„ԴԱՆԻԱ“ „ДАНІА“

ԲԻՖԼԻՍԻՄ ВЪ ТИФЛИСѢ
Բաղադրի կենտրոնում, Գօլովինսկի պրօսպեկտի վրա: Գեղեցիկ և մաքուր կահաւորված սենեակներ. օրը 60 կօպէկից մինչև 5 րուրի. ամսով մեծ զինում է սկսվում:
Կերակուրները թարմ և համով:
ВЪ центръ города, на Головинскомъ проспектъ. Изящно и чисто меблированные номера отъ 60 коп. до 5 руб. въ сутки; помѣсячно большая уступка.
Пища свѣжая и вкусная.

13—36

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԻ յանձն է առնում թարգմանել հայերէն մատչելի պայմաններով Փրանսերէնից, գերմաներէնից և անգլիերէնից: Ունենալով քանի մի աղա ժամեր պատրաստ է դասաւանդել Փրանսերէնը և գերմաներէնը ցանկացողին: Նախադասելի են առաւել նոր սկսողները:
Գիմել „Մշակի“ խմբագրութեան:

5—10

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Զ Ա Ն Ց Զ Ա Մ Ա Ր ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ: Առարողները ստանում են առ տեստատներ:
Աւանդելի առարկայք սորա են՝ 1) Առևտրական հետեւութիւն, 2) Առևտրական թուրքաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուրքաբանութիւն համընդհանուր, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական մուրհակի կանոնադրութիւն և 7) գեղագրութիւն:
Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնները սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, երեկոյան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սոլլախում, Աղէքսանդր Փրիզօսովի տանը, № 9 Սերգիէվկայա և Նազորնայա փողոցների անկիւնում, դեղատան դիմաց, Ծրագիրը ու կանոնները կարելի է ստանալ ՁԵՆՆԱԿԱՆ ԵՐ. Մովսիսյանների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաբաղադրացիք դիմում են կուրսերի հիմնողին.—Въ Тифлисе, С. П. Мануэлянци.

21—25 (Ե. Ե.)

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Շոգենաւերի կանոնաւոր և ուղղակի երթեկութիւն ՄԱՐՍԵԼԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ, չմիջադէպ օրերը, երկուշաբթի մի անգամ, չորեքշաբթի 9/21 յունվարից սկսած եւ ֆՈՒԱԴԱՐՁ

Բաթնովից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն, և Կ. Պօլիս:			
ԲԱԹՈՒՄԻՑ ՇՈԳԵՆԱԿԱՆ ԴՈՒՐՍ ԵՆ ԳԱԼԻՍ			
Չորեքշաբթի, 11/23 սեպտեմբերի	ԱՆԱՏՈԼԻԱ	—	ԳԱՐԻԻԳ
— 25 սեպտ. (7 հոկտեմբերի)	ԱՐՄԵՆԻԱ	—	ՏԻԲԱԼ
— 9/21 հոկտեմբերի	ՍԻՐԱԿԱՍԻ	—	ԲՕՇԵԼ
— 23 հոկտեմբերի (4 նոյեմբերի)	ԱՆԱՏՈԼԻԱ	—	ԳԱՐԻԻԳ

Ե այլն, երկու շաբթի մի անգամ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ օրերը, 4 ժամին կէսօրից յետոյ՝ Տօմսակների գնեղը ուղղակի երթեկութեան Բաթնովից դէպի Պարիզ իսկական գնից պակսեցրած են:

Տեղեկութիւններին համար ճանապարհորդների և բեռների մասին թող բարեհաճան դիմել ընկերութեան ագէնտներին. ԲԱԹՈՒՄՈՒՄ պ. Գարանիսին, Նաբեբէ-Ժայայ, Թիֆլիսի ՄԻ. Վիկտոր ԴԱՐՆՈՒՆ, Միջին-փողոցում, նախկին գնեղաւ Տէր-Ասատուրովի տանը, ԲԱԳԻՈՒՄ, Սամուէլ Դիլաբովին, Կօլիբիակինսկայա հրապարակ, և ՆՕՎՈՐՈՒՅՍՍԿԻՍ պ. Լուի Րենօին:

4—12 (Ե. Զ.)